ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 62-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 20-ի հերթական նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ, Գեղաձոր և Գեղադիր բնակավայրերում ջրագծերի կառուցման նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման համար գումար հատկացնելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ներբնակավայրային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ կատարելու նպատակով ավազակոպիճ ձեռք բերելու համար Ծաղկահովիտ համայնքի «Կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գումար հատկացնելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2027-2029թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 26.01.2024 թվականի N 07-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքի Գեղաձոր բնակավայրի մշակույթի տան համար երկաթյա դուռը ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կողմից համայնքային ծառայության և համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թափուր տեղերի համալրման համար մրցույթների կազմակերպման ու անցկացման համար ծրագրեր ձեռք բերելու և դրանց սպասարկման համար գումար հատկացնելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին
9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գները սահմանելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 18.02.2026

թվականի N 08-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին
11.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու հինգերրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ, ԳԵՂԱՁՈՐ ԵՎ ԳԵՂԱԴԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՋՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 89-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Փորձաքննության կենտրոն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը, ինչպես նաև Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ, Գեղաձոր և Գեղադիր բնակավայրերում ջրագծերի կառուցման նպատակով կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ենթարկման և եզրակացության տրամադրման համար հատկացնել 250.000 / երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 29-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՓՈՍԱԼՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՎԱԶԱԿՈՊԻՃ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ներբնակավայրային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ կատարելու նպատակով ավազակոպիճ ձեռք բերելու անհրաժեշտության մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ներբնակավայրային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ կատարելու համար 660 խմ /1 խմ-ը 1500 ՀՀ դրամ/ ավազակոպիճ ձեռք բերելու նպատակով Ծաղկահովիտ համայնքի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ին համայնքի բյուջեից հատկացնել 990.000 / ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 30-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2027-2029ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է*** ՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածներ 1 -ի, 2-ի և 3-ի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 31-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.01.2024 ԹՎԱԿԱՆԻ N 07-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 26.01.2024 թվականի N 07-Ն որոշմամբ հաստատված ձևերում կատարել լրացում
- որոշման 2-րդ կետը լրացնել և հաստատել նոր գ) ենթակետով հետևալ բովանդակությամբ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառման և գրանցամատյանների վարման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 3

Ծաղկահովիտ համայնքի ավագանու
20.05.2026 թվականի N որոշման

ԿԱՐԳ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառման, գրանցամատյանների վարման կարգը և գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների,

3.Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) Տեղական տուրք վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

4. Գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային և էլէկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

5. Գրանցամատյանները (այսուհետ՝ Աշխատակազմ) վարվում են Ծաղկահովիտի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժնում՝ բաժնի պետի պատասխանատվությամբ:

6.Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

7. Փաստաթղթային ձևով վարվող Գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8.Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման սկիզբը

2) տեղական տուրքի և վճարի տեսակը,

3) գրանցամատյանի վարման համար պատասխանատու բաժնի անվանումը և անձի անուն, ազգանունը, (ստորագրությունը),

4) տեղական տուրք կամ վճար վճարողների գրանցման հերթական համարը,

5) համայնքի ղեկավարի որոշման համարը և ամսաթիվը, որի հիման վրա գանձնվել է տուրքը կամ վճարը (լրացվում է առկայության դեպքում),

6) տեղական տուրքի կամ վճարի չափը,

7) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք կամ վճար:

9. Տեղական տուրք կամ վճար վճարող ֆիզիկական անձանց դեպքում գրանցամատյաններում (Ձև 1 և 2) ներառվում են նաև՝

1) Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը

2) հաշվառման հասցեն

3) անձը հաստատող փաստաթղթի տվյալները

10.Տեղական տուրք և տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 1 և Ձև2) ներառվում են նաև՝

1) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

2) գրանցման հասցեն,

3) գործունեության հասցեն

4) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը.

5)հարկ վճարողի հաշվառման համարը:

11. Տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են պատասխանատու անձի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:

12.Գրանցամատյանները կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տեղական տուրք կամ տեղական վճար

13.ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են համայնքապետարանի կնիքով և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

14. Գրանցամատյանների Ձև 1-ը և 2-ը կցվում են

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 32-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿԱԹՅԱ ԴՈՒՌԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքի Գեղաձոր բնակավայրի մշակույթի տան համար երկաթյա դուռ ձեռք բերելու համար համայնքի բյուջեից հատկացնել 450. 000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքային ծառայության և համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թափուր տեղերի համալրման համար մրցույթների կազմակերպման ու անցկացման համար ծրագրեր ձեռք բերելու և դրանց սպասարկման համար գումար հատկացնելու մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի համայնքային ծառայության և համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թափուր տեղերի համալրման համար մրցույթների կազմակերպման ու անցկացման համար ծրագրեր ձեռք բերելու համար հատկացնել 300.000 / երեք հարյուր հազար / ՀՀ դրամ, իսկ ծրագրերի սպասարկման համար տարեկան 100.000 / մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 34-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածքը մրցութային կարգով տրամադրել վարձակալության, սահմանել դրա մեկնարկային գինը և հավելաճի քայլի չափը՝
- Գեղաձոր բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության , 02-031-0125-0008 կադաստրային ծածկագրով 0,18007 հա հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել 2.000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 500 ՀՀ դրամ,
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 35-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի » 67-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Մար-Մոս» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից տրված հողամասերի շուկայական արժեքների գնահատման հաշվետվությունները, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածքները՝
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրի 4-րդ փողոց 22 հողամաս հասցեում գտնվող, 02-027-0019-0018 կադաստրային ծածկագրով, 0,24436 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել **1.055.000** (մեկ միլիոն հիսունհինգ հազար) ՀՀ դրամ,(հիմք՝ անշարժ գույքի գնահատման թիվ ԾԱՂԿ-0003 հաշվետվությունը),
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Շիրակացու փողոց 12/6 հողամաս հասցեում գտնվող, 02-053-0001-0115 կադաստրային ծածկագրով, 0,0249 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել **620.000** (վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, (հիմք՝ անշարժ գույքի գնահատման թիվ ԾԱՂԿ-0002 հաշվետվությունը),
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Լեռնապար բնակավայրում գտնվող, 02-049-0115-0025 կադաստրային ծածկագրով, 0,6837 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել **1.025.000** (մեկ միլիոն քսանհինգ հազար) ՀՀ դրամ, (հիմք՝ անշարժ գույքի գնահատման թիվ ԾԱՂԿ-0004 հաշվետվությունը),
- ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Հնաբերդ բնակավայրում գտնվող, 02-065-0112-0033 կադաստրային ծածկագրով, 1,57796 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել **2.450.000** (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, (հիմք՝ անշարժ գույքի գնահատման թիվ ԾԱՂԿ-0001 հաշվետվությունը),
2. Օտարման ենթակա բոլոր հողատարածքների համար հավելաճի քայլը սահմանել գնահատված շուկայական արժեքի՝ մեկնարկային գնի 5 /հինգ / տոկոսի չափով:
3. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 36-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.02.2026 ԹՎԱԿԱՆԻ N 08-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 18.02.2026 թվականի N 08-Ն որոշման մեջ կատարել լրացում
- որոշման 1-ին կետում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ / սուբվենցիաներ/ ստանալու 2026 թվականի հաստատված ծրագրային հայտերը լրացնել նոր հայտերով հետևյալ բովանդակությամբ՝
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր, Բերքառատ, Գեղարոտ, Ծիլքար և Լեռնապար բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգում :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի N 37-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Ծաղկահովիտ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու հինգերրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2026 թվականի հունիսի 23-ը, ժամը 14:00-ն:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՀԻՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՂԱՋԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**